Ժ.

ՄՈՎՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Թուղթ առ Վլատիշլաւ Լ. արքայ Լեհաց[1]. ՌՉԱ. = 1633, ՕԳՈՍ. 30.

ՍՏՈՒԱԾԱՊԱՐԳԵՒ Քրիստոսապսակ՝ ծիրանածին և շքեղաշուք, ի գերագոյն տոհմէ ընտրեալ և ի պանծալի շառաւիղէ երևեալ, պսակ և զարդ քրիստոնէից և ահարկու թշնամեաց խաչին Քրիստոսի, ով նազելի և սիրանունդ հոգեզարդ արքայից արքայ Վլատիշլաւ։

Որ թէպէտ ամենայն կենդանեաց թագաւորք ի չորս բաժանեալ են, այսինքն Մարդ և Առիւծ, Եզն և Արծիւ, որ զչորս Աւետարանչացն ունի զխորհուրդ, որք են չորեքկերպեան աթոռ անմահին Աստուծոյ. սակայն ներքին նկատմամբ՝ ի քեզ տեսանի լիապէս գործառնութիւն չորեսին թագաւորութեանցս այս. քանզի անհամեմատ քանակութեամբ ի պատկեր Աստուծոյ յօրինեալ ես, ձեռամբ անհուն հզօրին՝ մարդ. եւ անյաղթելի արիութեամբ և հզօր զօրութեամբ Ձեր և ահարկու դիմեցմամբ ի թշնամիսն խաչին Քրիստոսի, բերես զնմանութիւն առեւծու. Եւ չինարար և վաստակաւոր գոլով միշտ՝ յայգի Տեառն գործելով, բերես ի քեզ զնմանութիւն եզին. Եւ բարձրաթռիչ և արիական գոչմամբ քո՝ ցուցանես ի քեզ զնմանութիւն արծուոյ։ Վասն որոյ յարաժամ հանգչի ի քեզ Հոգին Աստուծոյ, ըստ համեմատութեան չորեքկերպեան աթոռին։ Ո՛վ պանծալի պետ և ակնկալութիւն ամենայն քրիստոնէից. պահող և պատսպարան բանաւոր հօտին Քրիստոսի։

Նուաստ ծառայ ծառայիցդ Աստուծոյ, Մովսէս կաթողիկոս ամենայն Հայոց, յաջորդ և վերագիտող գահոյից պարթևազին Գրիգորի, ի վիճակ թաթէոսի սուրբ առաքելոյն՝ ի վերայ արամեան տոհմի. ի հեռաստանէ իբր առ ընթեր գոլով մեծարգոյ և բարձրաբերձ գահոյից Ձերոց, զսրբարար և զաստուածայինն մատուցանեմք ողջոյն, նորընծայ և քրիստոսապարգեւ թագաւորիդ մերոյ Վլատիշլաւի, հանդերձ ամենայն ընտրելագոյն աշակերտօքն մերովք. Քեզ և ընդ քեւ եղեալ մեծամեծ և քրիստոսասէր իշխանացն, յամենեսեան և յամենայնի ի Տէր խնդալ։ Եւ հարցանելով հարցանեմք զանօթդ

1. Հրատարակուած էր թուղթս ի Ճռաքաղ օրագրի, Բ, 72, որպէս և թուղթ Փիլիպոսի կթղ. առ նոյն թագաւոր։ Ն. 90։